ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 190
01 հունիսի 2018թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Հարգելի պարոն Կ. Գուլոյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/ 15.1/1607-17 գրության Ձեզ ենք ուղարկում Մրգաշեն համայնքի ղեկավարի մայիս ամսվա որոշումները:

Առդիր 11 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05 » մայիսի 2018 թվականի N 31

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշումը, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731- Ն որոշմամբ հաստատված պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետական կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի պահանջներով և այն հանգամանքը, որ Մրգաշեն համայնքի 1-ին փողոց 26-1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.0024հա մակերեսով բնակավայրերի այլ նշանակության 0028-0030 ծածկագրով հողամասի վրա Յուրիկ Շալիկոյի Սարգսյանի կողմից ինքնակամ կառուցված 24քմ ավտոտնակի շինությունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չի հակասում թաղամասի կառուցապատման պլաններին և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը՝ *որոշում եմ*

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի 1-ին փողոց 26-1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.0024 հա մակերեսով բնակավայրերի այլ նշանակության, 0028-0030 ծածկագրով հողամասի վրա Յուրիկ Սարգսյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակի 24քմ շինությունը՝ համարել համայնքային սեփականություն:
2. Առաջարկել Յուրիկ Սարգսյանին օգտվել ուղղակի վաճառքի միջոցով գնման նախապատվության իրավունքից և 15-օրյա ժամկետում ավտոտնակի շինության համար վճարելով 24քմ x 780 = 18720 դրամ, իսկ 24քմ հողամասի համար հողի կադաստրային արժեքը, որը կազմում է 24քմ x 1242դրամ= 29808 դրամ, սեփականության իրավունքով ձեռք բերել վերոնշյալ կառույցը և նրա զբաղեցրած հողամասը:
3. Դիմել ԱԳԿՊԿ-Ի Եղվարդի տարածքային ստորաբաժանում՝ օրենքով սահմանված կարգով համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարելու նպատակով և հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակելի կառուցապատման նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. մայիսի 05
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք 1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մայիսի 2018 թվականի N 32

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով և համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 48-Ն որոշմամբ՝

1.Հաղթանակի օրվա կապակցությամբ սոցիալական հատուկ արտոնություններ բյուջեի ծախսեր 4729 հոդվածից 300000 (երեք հարյուր հազար) դրամ միանվագ դրամական օգնություն հատկացնել Արցախյան ազատամարտի մասնակիցների և զոհված ազատամարտիկների ընտանիքներին համաձայն հավելվածի

2.Հանձնարարել ֆին. եկամուտների գլխ. մասնագետ Ն. Գրիգորյանին գումարի հատկացումը կատարել սահմանված կարգով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
07.05.2018Թ. ԹԻՎ 32 ՈՐՈՇՈՒՄ

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՋՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

1.	Մուրադյան Լիաննա	20 000 (քսան հազար) դրամ
2.	Ստեփանյան Վարսիկ	20 000 (քսան հազար) դրամ
3.	Դավեյան Նարինե	20 000 (քսան հազար) դրամ
4.	Շառոյան Բրաբիոն	20 000 (քսան հազար) դրամ
5.	Շաբոյան Արեգնազ	20 000 (քսան հազար) դրամ
6.	Ասատրյան Ահարոն	20 000 (քսան հազար) դրամ
7.	Պողոսյան Ալբերտ	20 000 (քսան հազար) դրամ
8.	Նիկողոսյան Վրույր	20 000 (քսան հազար) դրամ
9.	Գևորգյան Սմբատ	20 000 (քսան հազար) դրամ
10.	Մխիթարյան Մխիթար	20 000 (քսան հազար) դրամ
11.	Շահբազյան Ռոբերտ	20 000 (քսան հազար) դրամ
12.	Սայադյան Սայադ	20 000 (քսան հազար) դրամ
13.	Սարգսյան Սուրեն	20 000 (քսան հազար) դրամ
14.	Բաղդասարյան Վանուշ	20 000 (քսան հազար) դրամ
15.	Գրիգորյան Վալերիկ	20 000 (քսան հազար) դրամ
ընդհամենը		300 000 (երեք հարյուր հազար) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018. մայիսի 07
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մայիսի 2018 թվականի N 33

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով և համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 48-Ն որոշմամբ՝ և հիմք ընդունելով Արմեն Հարությունյանի, Անահիտ Արոյանի և Քնար Պետրոսյանի դիմումները՝ *որոշում եմ.*

Արմեն Հարությունյանին, Անահիտ Արոյանին և Քնար Պետրոսյանին սոցիալական հատուկ արտոնություններ բյուջեի ծախսեր 4729 հոդվածից հատկացնել դրամական օգնություն հետևյալ չափով

1. Հարությունյան Արմեն	30 000 / երեսուն հազար / դրամ
2. Պետրոսյան Քնար	40 000 / քառասուն հազար / դրամ
3. Արոյան Անահիտ	40 000 / քառասուն հազար / դրամ
Ընդամենը	110 000 (մեկ հարյուր տաս հազար) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. մայիսի 07
Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11 » մայիսի 2018 թվականի N 34

ԱՐԱՄ ԵՍԱՅԱՆԻ ԽՆԴՐԱՆՔԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշումը և 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 33,34 կետերի պահանջները և այն հանգամանքը, որ Մրգաշեն համայնքի 1-ին փողոց 6-րդ նրբ. թիվ 18 հասցեում գտնվող 0.1189հա մակերեսով բնակելի կառուցապատման նշանակության, 0058-0009 ծածկագրով իր սեփական հողամասի վրա Արամ Եսայանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը արտաքին չափերով 248.3քմ մակերեսով, ծածկոցը 102.2քմ, ջրավազանը 19.95քմ, շոգեբաղնիքը 27.7քմ և պարիսպը 20.4քմ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օտարման կամ անվտանգության թաղամասի կառուցապատման պլաններին և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը՝ *որոշում եմ*

1. Համապատասխան վճարով ճանաչել օրինական գյուղ Մրգաշեն 1-ին փողոց 6-րդ նրբ. թիվ 18 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Արամ Եսայանին պատկանող հողամասում ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինությունները:
   1) բնակելի տուն 248.3քմ, մեկ քառակուսի մետրի արժեքը 1300դրամ, ընդամենը 322790դրամ:
   2) օժանդակ շինությունները՝ ծածկոցը 102.2քմ, ջրավազանը 19.95քմ, շոգեբաղնիքը 27.7քմ և պարիսպը 20.4քմ ընդամենը 170.25քմ մեկ քառակուսի մետրի արժեքը 780դրամ, որը կազմում է 132795դրամ:
2. Ճանաչել օրինական գյուղ Մրգաշեն 1-ին փողոց 6-րդ նրբ. թիվ 18 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Արամ Եսայանին պատկանող բնակելի տունը և օժանդակ շինությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. մայիսի 11
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11 » մայիսի 2018 թվականի N 35

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի պահանջով, որոշում եմ.

1. Հաստատել Մրգաշեն համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային տարեկան ծրագիրը, համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. մայիսի 11
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15 » մայիսի 2018 թվականի N 36

ՌՈԶԱ ՍՊԱՐՏԱԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին » 2002թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռոզա Սպարտակի Պողոսյանի ընտանիքին հատկացված է եղել 0.90հա գյուղ. նշանակության հողամաս 0129-0027 ծածկագրով: 1999թ. քարտեզագրման ժամանակ հողամասը թյուրիմացաբար գրանցվել է 0.90հա մակերեսով, սակայն նշված հողամասը իր պարագծային չափերի մեջ կազմում է 0.9359հա, ուստի նրա կողմից ավել օգտագործվող 0.0359հա հողամասը չի գերազանցում նրան հատկացված հողամասի 20%-ը և չի գտնվում 60 հոդվածով սահմանված հողերի ցանկում չի առաջացնում սերվիտուտ *որոշում եմ*.

1. Ճանաչել Ռոզա Սպարտակի Պողոսյանի ընտանիքի սեփականության իրավունքը ըստ քարտեզում նշված պարագծային չափերի արդյունքների, 0129-0027 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.0359հա մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Կատարել համապատասխան ուղղում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. մայիսի 15
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մայիսի 2018 թվականի N 37

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով և համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 48-Ն որոշմամբ
որոշում եմ.

Մրգաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին և համայնքի ղեկավարի տեղակալին տալ պարգևատրում յուրաքանչյուրին հետևյալ չափով.

2. Ղազարյան Շողիկ	210 100/երկու հարյուր տաս հազար հարյուր / դրամ
3. Սայադյան Սայադ	164 000/մեկ հարյուր վաթսունչորս հազար/դրամ
Ընդամենը	374100 (երեք հարյուր յոթանասունչորս հազար հարյուր) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. մայիսի 17
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մայիսի 2018 թվականի N 38

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով և համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 48-Ն որոշմամբ՝ և հիմք ընդունելով Մանյակ Հովհաննիսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

Մանյակ Հովհաննիսյանին սոցիալական հատուկ արտոնություններ բյուջեի ծախսեր 4729 հոդվածից հատկացնել 50 000(հիսուն հազար) դրամ դրամական օգնություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. մայիսի 17
Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21 » մայիսի 2018 թվականի N 39

ՌԱԶՄԻԿ ՄԱՑԱԿԻ ԱՐԱՄՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին » 2002թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռազմիկ Մացակի Արամյանի ընտանիքին հատկացված 2-րդ փողոց թիվ 12 հասցեում գտնվող բնակելի տնով 0009-0025 ծածկագրով տնամերձ հողամասը 1999թ. քարտեզագրման ժամանակ թյուրիմացաբար գրանցվել է 0,06հա մակերեսով, որը գրվել է N 0177084 սեփականության վկայականում, սակայն նշված հողամասը իր պարագծային չափերի մեջ կազմում է 0.10944հա, քանի որ ավել օգտագործվող 0.04944հա հողամասը չի գտնվում 60 հոդվածով սահմանված հողերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ և նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար *որոշում եմ*.

1. Ճանաչել Ռազմիկ Մացակի Արամյանի և Միլվա Հրաչիկի Գրիգորյանի սեփականության իրավունքը ըստ քարտեզում և հատակագծում նշված պարագծային չափերի արդյունքների, 0009-0025 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.04944հա մակերեսով հողամասի նկատմամբ:
2.Կատարել համապատասխան ուղղում ըստ գեոդեզիստ քարտեզագրողի կողմից ներկայացված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. մայիսի 21
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք.1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29 » մայիսի 2018 թվականի N 40

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով և համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 48-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

Սոցիալական հատուկ արտոնություններ բյուջեի ծախսեր 4729 հոդվածից Մրգաշենի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի դասղեկ Նաիրա Գրիգորյանին տալ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ վերջին զանգի կապակցությամբ միջոցառումներ կազմակերպելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

2018թ. մայիսի 29
գ.Մրգաշեն